



Ташкинбай

Зроблено в Узбекистан



1931



5 OCT 2011

Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ԵԶՄԻԱԾԻՆ
ԱՆՑՑԱԼՈՒՄ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ)



ՊԵՏՀԱՐԱՍ
ՅԵՐԵՎԱՆ 1931

29(49.925)

ԴԻ-358.

Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ԵԶՄԻԱԾԻՆ
ԱՆՑՅԱԼՈՒՄ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԾՈՒԹՅՈՒՆ ՓՈՐ)

ԱՐԱՋԱԲՈՆԻ ՓՈԽԱՐԵՆ

«Եջմիածինը հայ ազգի հոգեոր հայոն ե», նրա «կատարելության գաղաթնակեռք», «Հայ ազգի հոգին ու սիրութ», «ամեն հայուն հաստատությունը» և այլն, և այլն...

Ահա, այսպես են բարբառել տասնյակ դարերի ընթացքում կղերականության և հետադայում բուրժուազիայի իդեոլոգիները: Հաղարավոր տարիների ընթացքում քարոզած այդ վնասակար մաքերն ա'յնքան խորն են նատել սարկական ու ճորտական վիճակում ապրող աշխատավորության ուղեղներում, ա'յնքան մեծ ազդեցություն են ունեցել հետազա սերունդների վրա, մինչև անդամ մեր որերում, այսոր, յերբ աշխատավորության հետամնաց տարրերի կողմից այդ գաղափարները ընդունվում են վորագես անհրաժեշտություն առանց քըննադատելու, առանց՝ նրա գառակարգային եյությունն ըմբռնելու փորձ անդամ անելու:

Պարզ էիտակցելով, վոր նման պասսիվ վերաբերմունքն ամբողջովին դեմ և հեղափոխական պրոլետարիատի և աշխատավորության շահերին, մենք հետեւելով մեր մեծ ուսուցիչ ՄԱՐՔՍԻ որինակին—յենթարկել ամեն ինչ կասկածանքի, չդատել մեկի (ներկա դեպքում Եջմիածնի) մասին, հենվելով այն բանի վրա, ինչ նա ինքն է ասում իր մասին—աշխատել ենք պատմական մատերիալիզմի պրինցիպների լույսի տակ, լուսաբանել Եջմիածնի անցյալի տնտեսական-քաղաքական դեմքը:

ԹԵՏՐԱԾԻ ՏՄԱՐԱՆ
ՀՐԱՄԱԿ. 1761
ԳԼԱՎԼԻՏ 6680(Բ)
ՊԱՏՎԵՐ № 4030
ՏԻՐԱԳ 4000



6149

38

Ներկա գլոբույկը, վոր նվիրված և ինդքի անահատ-
կան կողմի լուսաբանմանը միայն (Եջմիածնի քաղա-
քական դեմքի մասին խոսք կլինի առանձին) և կրում
և ավելի չուտ պատճական ուսումնասիրական բնույթ,
առաջին փորձն և այդ ուղղությամբ և վրավես արդպի-
սին, անկատկած, կունենա իր թերությունները յիշե
անգամ նկատի չունենանք, վոր դա հեղինակի առաջին
գործն է:

1931 թ. Գետրվար
Յերեվան...

ԵԶՄԻԱԾԻՆԸ - ԽՈՇՈՐ ԿԱԼՎԱԾԱՏԵՐ - ՃՈՐՏԱՏԵՐ

Մոտ 16 դար (1600 տարի) մեղանից առաջ, Հայ
Փեղալ-աղնվականները բոնի ուժի, հրի ու սրի մի-
ջոցով սկսեցին տարածել Հայաստանում քրիստոնեու-
թյանը:

Քրիստոնեությունն ամբողջովին համապատաս-
իսմ լինելով հայ իշխող դասակարգերի շահերին, լայն
ընդունելություն գտավ նրանց կողմից, վորպես ամեն-
ալալով, հարմար միջոցը, —իրենց իշխանությունն ամ-
րագնդելու, շահագործվող գյուղացիության ըմբռատու-
թյունները ճնշելու, նրանց հնազանդություն, տերերին
միշտ հավատարիմ ծառայելու քարոզներ կարդալու
գործում։ Հայ հոգեվորականության կատարած այդ
գործն այն աստիճան ողտավետ ու անհրաժեշտ և յե-
ղել կարվածատեր, շահագործող դասակարգերի հա-
մար, վոր ամեն մի փորձ, ում կողմից ել ուղում. և այդ
մինի, խախտելու հոգեվոր դասի իրավունքները, կալ-
վածատերերի կողմից յենթարկվել և ուժեղ գիմա-
գրության ու անխնա հաշածանքի. և ընդհակառակը,
հոգեվորականությունը միշտ ել պաշտպանել ու սըր-
բագործել և նրանց իրավունքն ու գույքը։

Այդ են ապացուցում պատմական փաստերը։

Վերցրեք թեկուղ 5-րդ դարի պատերազմները, վոր
միք տիրացու պատմագիրները ներկայացրել են վորպես
պատ կրօնական պատերազմներ։ Մինչդեռ դրանք վոր

այլ ինչ են, յեթե վոչ լավագույն նմուշներ հոգեվոռ-
րականության և իշխող դասակարգերի վտապաղաք հա-
մերաշնության ու գործակցության իշխնց շահերն տ-
ռաջ մղելու համար: Ու այդպես մինչեւ վերջ: Հայ հո-
գեվորականությունը, նրա գլուխ կանոնած Եջմիածի-
նը, դաշնակցելով իշխող կալվածատեր-աղնական դա-
սակարգերի հետ, նրանց ողնությամբ կարողացել և
նվաճել տնտեսական և քաղաքական կարելոր գիրքեր,
ծծելով հայ շինտկանի, քրտնաշան աշխատանքի հյու-
թերը, հասել և մեծամեծ հարստության ու փառքի:

Մի կողմ թողնելով պատմական հնագույն շր-
ջանները, ծանոթանանք Եջմիածինի՝ նոր և նորագույն
դարեշրջաններում կատարած տնտեսական դերի հետ:

Դեռ 17—18-րդ դ. դ. Առմանցիների և Պարսիկ-
ների տիրապետության շրջանում, Եջմիածինն աշխար-
հիկ մյուս ճորտատեր-կալվածատերերի նման ունեցել և
իրեն յենթակա ճորտ գյուղեր, վորոնք այդ, ինչպես
և հետագա դարերի ընթացքում սիստեմատիկաբարը
հարկ-մուլք են վճարել Եջմիածնին: Սիմեոն Եերեվան-
ցի կաթողիկոսը, վորը չափազանց մոտ և կանգնած յե-
ղել Եջմիածնի տնտեսական գործերին, իր մեղ թողած
մի գրվածքում «Զամբո»-ում (Դիլան) անվանում և Եջ-
միածնապատկան մոտ քանի հինգ, յերեսուն գյուղեր
(Ռշտկան, Աշտարակ, Յեղվարդ, Աղավնատուն, Բի-
րական, Ֆռանգանց, Մուղնի, Մաստարա, Քեշիշ-
ենդ, Նորք, Յայջի, Ամիրիքիղջ, Բաբոնիջ Քիրաշլու,
Գիպակլու, Հաջիլար, Սաղմոսավանք, Գյոլֆյանդ, Կեդ-
ունի, Կալվակերտ, Նորագավիլք, Ծոփանիս, Բոխենիս,
Ջարաղոյանիլար, Մելիքի-Գեղջ, Կյարուռ և այլն), վո-

բոնցից տարբեր ժամանակներում, Եջմիածինը հար-
կեր, կոռ ու բեղյարաներ և ստացել. (Տես, «Զամբո»
1873 թ. եջ՝ 99—130): Բերենք մի քանի որինակներ:

«...Այս գյուղն (Վաղարշապատ Վ. Պ.), վոր
ե կից սրբություն, ամբողջովին սուրբ աթոռ-
ունն և հողով, ջրով, և իր սկարագաներով, թե ըստ
հոգեվորական հասկցն և թե ըստ մարմնավորական
հարկին»:

(«Զամբո» եջ՝ 99—100).

«Գյուղ այս մի (Աղավնատուն Վ. Պ.) և այն
յոթն գյուղերիցն, վոր առող Մակվեցի Դրիգոր
Կաթուղիկոսն և վախո՞ց գրեց սուրբ աթոռիս» (129):
«Գյուղս այս՝ Մուղնի՝ մեկն և այն յոթը գյուղե-
րից, վորի վեց դանկ մուլքն Ամիր-Ռուստամն ծա-
խնց Մակվեցի Գրիգոր Կաթուղիկոսին հաղար հի-
սուն և հինգ դիմարի, վորի մեծ զարդարն և վա-
խումնաման կա աթոռումն... և այդ գյուղն և
մուլք ս. աթոռիս» (117):

«Մեր ՌՃՃԱ (1722) թվին Ռշական գյուղի բոլոր
հայերը մի պատահարից և հարկադահանջությունից
նեղն ընկնելով սաստիկ անձարանում են և զալիս Աստ-
վածատուր կաթուղիկոսի մոտ, խնդրում հարյուր հի-
սուն թուման դրամ, հետեւյալ պայմանով... Մեր
գյուղի վեց դանկ մուլքը, վոր և տասնանորդ, Սուրբ
աթոռինդ և, արդ՝ այսքան դրամ տուր մեղ և մենք
այսուհետև յերկու մուլք տանք քեզ, վոր կլինի հըն-
չից մեկը կամ տասից յերկու մուլք» («Զամբո» եջ՝
111—112. տես և «Նոր» № 2 թ. Ավելալբեկյանի հող-
վածը): Եջմիածինը, վորը իրեն մեծաքանակ կալվածք-
ներից, ճորտ գյուղերից և կրօնական «սրբություննե-
րի» ու «սուրբ» մասունքների շահավետ վաճառքից,
վարողացել եր մեծ հարստություն և կապիտալ կուտա-
կել և ամբողջ Ասիայում, ինչպես վկայում և ոտարեր-

կրյա ճանապարհորդիք՝ Զեյմս Մորիերը, հայտնի դառնակ, վորպես ամենախոշը դրամատւերերից մեկը, վորպես մեջ բերած և այլ առիթներով իրեն և յնթարկում ու ճարտացնում և բաղմաթիվ այլ գյուղեր ու ամենասարբարսոսական ձեփերով շահագործում, թալանում գյուղացիությանը, նրանց կյանքը թշվառ, դառն ու անմիջար պայմանների մեջ դնելով։

Այս գրությունն ալելի ցայտուն կերպով և արտահայտվում նուսաց տիրապետության շրջանում։

ՅԱՐԱԿԱՆ ՆՎԱՅՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵԼ ԵՇՄԻԱ- ԾԻՆԸ

18-րդ դարի վերջից սկսած մինչև 19 դ. առաջին քառորդը, Անդրկովկան անընդհատ պատերազմների թատերաբեմ եր դարձել։

Թուսական առեվլարական կապիտալն ամբացնելով եր դիրքերը Հյուսիսային ծովում, ձեռնարկել եր իր հաղթական արշավին տիրապետելու հարավային առեվլարական ճանապարհներին ել, վորովհետև ինչպես առում և մարքսիստ պատմաբան Պակրովսկին «Ռուսական առևտրական քալանի հիմքում հացի արտահանումը, կարելի յեր դմել միայն նրա առաջ քանալով Սեվ ծովի դամերը»։

Այս աշխարհականական, նվաճողական քաղաքականությունը ցարական միտակետությունն իրադորելում եր վոչ միայն իր զինված ուժերի միջոցով, այլև նվաճվող էրկրների տիրող կարգերից դժուհ, սոցիալական այս կամ այն խավի ակտիվ ժամանակցությամբ։ Անդրկովկանում, վորպես այդպիսին, դեռ 18-րդ դ.

սկզբից հայտնի եյին հայ առևտրական կապիտալը և Եջմիածինը, վորոնց ներկայացուցիչները, ի դեմս իսրայել Որու և Մինաս վարդապետի, կարողացել եյին թափանցել ոռուսական արքունիքը, առաջարկելով «Հյուսիսի արծիվին»—Անդրկովկասի նվաճման գործում—իրենց որդտավետ և ամենախոնարհ ծառայությունը։

Տակալին 1709 թվին այդ ուժերը զրում եյին Պետրոս Մեծին, քե—«Արի քո զորքով և մենք կապըստամբենք, վոսքի կելնենք»...

Մի կողմ թողնելով հայ առևտրական կապիտալի խնդիրը, ծանօթանանք այն հարցին, թե ինչո՞ւ առևտրական կապիտալի հետ միաժամանակ ապստամբվում եր և Եջմիածինը, ի՞նչով եր շահագրդոված նա, վոր աշխատում եր անպայմանորեն ցարեղմը նվաճի Անդրկովկասը և մերձավոր մի շաբք յերկրներ։

«Հայ-Ռուս որիենտացիայի» խողովով զբաղվող բոլոր բուրժուական գիտնականները, Եջմիածնի ոռուսականությունը (ի դեպ յեղել և մի փոքրաթիվ խմբակ պարսկական որիենտացիայի) բացատրելու համար, միանդամայն հասկանալի պատճառներով, առաջին սլանի վրա յեն քաշել կրոնական Փակտորը, այնինչ այդ որիենտացիայի հիմնական ազդակներից մեկը յեղել և անտեսական շահ։

Եջմիածինը եր բազմաթիվ կալվածքներից ու ճորտ գյուղացիներից ստանում եր մեծաքանակ հարկեր, յեկամուտներ, սպառել այդ ամենը ֆիզիքապես անհնարին եր. պարսկական տիրապետությունն ել մի շարք խոչընդուներ ու արքելքներ եր հարուցում նրա առաջ, անհնարին դարձնելով այդ յեկամուտների ուեալինացիան։

Այդ կարելորագույն տնտեսական և քաղաքական նշանակություն ունեցող խնդրի իրականացումը, հայ առևտրական կամպիտալը և կալվածատիրությունը ուղարկան առևտրական կամպիտալի ու ճորտատիրական պետության սիստեմի մեջ եյին տեսնում իրենց զարգացման ներկան ու ապագան—նրա մեջ գծում։

Ահա թե ինչու Եջմիածինը, վորովու ամենախոշոր կալվածատեր-ճորտատերը, բնականաբար պետք եր այդ աստիճան «ոռուսասեր» լիներ։

Դրան ավելացրեք և այն, վոր Եջմիածնի ստացած արդյունքների վորոշ մասը հաճախ խլվում եր, հարստանալու տեսնչով բռնկված այս կամ այն կառավարիչների կողմից։ Յեկամտի մի այլ աղբյուր, ինչպիսին քրիստոնեական կրոնն եր, շատ պարզ ե, վոր տիրող կարգերի կողմից չեր կարող հովանավորվել և լայն գործակցություն, աջակցություն դանել։

Այս և նման մի չափամանքներ անպայմանուրեն ավելի եյին սրում ատելությունն ու թշնամանքը տիրող կարգերի դեմ և լայն ճանապարհ բաց անում ուղարկան որինտացիայի առաջ։ Հակառակ դրան ուղարկան խորամանկ դիմադրիտությունը քաջ գիտակցելով Եջմիածնի կարելոր նշանակությունը Անդըրկովկասի նվաճման գոբծում, ամեն կերպ սիրաշահում, զանազան խոստումներով իր կողմն եր գրագում։ Թե վորքան մեծ նշանակություն և ունեցել Եջմիածինը ցարիզմի այդ քաղաքականության մեջ, յերեվում և կայսրի կոմս Սալտիկովին գրած մի հրամանից։

«...Զեղ ավելի լավ են հայտնի այն յերկրի (արարատյան աշխարհի) բոլոր հանգստանքները և ավելորդ կլիներ յերկար բարակ բացատրել Ձեզ, վոր մեր այդտեղի գործերի կապը (կծիկը). ստի-

պում և մեղ ուշադրություն՝ “դարձնել այդպիսի բարձր աստիճանի համար ընտրվող անձնավորության վրա... Բայց այն դեպքում, յեթե սույն միջոցին Դանիել կաթողիկոսը վախճանվեց, հարկ կլինի անմիջապես տեղը զննել Ծովառաստանին անձնվեր մի անձ, վորպեսովի պարսկեները ոգուստ չքաղեն նշանակել իրենց շահերին նվիրված մի կաթողիկոս։ Այդ պատճառով Ձեզ իրավունք ե տրը-վում նշանակել և կանխավիճ հաստատել երան, ով ուսաց անձնվեր և հայոց աղդին հաճելի անձն լինի»։^{*)}

1796 թվականին սկսվում են ուղարկան աղջավանքները գեղի Պարսկաստան և Անդրկովկաս։ Եջմիածնի ներկայացուցիչները ուղարկում են անում հոգուտ այս նոր նվաճողների, տարածելով այնպիսի առասպելներ, վոր իր թե ուղարկում գալիս են քրիստոնեա ժողովուրդներին աղատելու մահմեղականների լծից, պատժելու ԱղաՄամեդ խանին և այլն, վոչ միայն, վորպես տեղական պայմաններին ծանոթ, առաջնորդում են ուղարկան գորքերին (Հովհանի Արդության և այլն), այլև կազմակերպում են վարձու «կամավորական» կունգ, վորը Ներսես Աշտարակեցու գլխավորությամբ ուղարքերի հետ մասնակցում և անմիջական պատերազմուկան գործողություններին։ և վերջապես, այդ նույն Եջմիածինը թալանելով շրջակա գյուղերը, սպասարկում է ուղարքերի մննդի ու փոխադրության գործին։ 1805 թ. Ռուս պետական տեղեկատուք 125 համարում Եջմիածնի կատարած ծառայությունների մասին հետեւյալն ե ասվում։

^{*)} Ա. Յերեցյան «Ամենայն հայոց կաթողիկոսություն և Կովկասի Հայք 19-րդ» մաս Ա. Էջ 42—43.

«Մուսական կառավարությունը գնահատելով
ժայ պատրիարքների նշանակությունը, ոկտոս
18-րդ դարից պաշտպանում է նրանց դործունեցու-
թյունը, ամեն անապակ աշակցություն ցույց տալով
և ուսուելով նրանց աղբեցությունից իր ա-
ռևտրական և քաղաքական նպատակների համար։
Նկատի ունենալով Հայ պատրիարքների քաղաքու-
կան կարևոր նշանակությունը կովկասի, Անդրկով-
կասի և Փոքր Ասիայի քրիստոնեա բնակչության
համար, Ռուսական կառավարությունը միշտ ել
հատուկ ուշադրություն եր դարձնում զեսպի Եջմի-
ածնի Վանքը։ Նրանք (պատրիարքները) զործա-
կան մասնակցություն ենին բերում պարսիկների
և թուրքերի հետ ունեցած մեր պատերազմներում,
յերբեմն ձի նստած, խաչը ձեռքին անցնելով
մեր զորքի գլուխը։»

Եջմիածնի դործոն մասնակցությամբ Ռուսական
նվաճողականությունը մոտ 30-ամյա սկատերագմներից
հետո գրավում և գրեթե վողջ Անդրկովկասը։ 1801
թվին միացնում է Վրաստանը, 1843 թ. Գյուլիստանի
դաշնագրով Ռուսաստանին են անցնում Բագվի, Նա-
խու, Շամախու, Ղարաբաղի խանությունները, 1828
թվի քյուրքմանչայի դաշնագրով՝ Յերեվանի, Խալի-
ջեվանի, Որդուրաքի խանությունները, Հետագայում
և Ղարսի նահանգն ու այդպիսով «Հյուսիսի արձվի»
ոգնությամբ նրա զենքի ուժով իրականություն և դա-
նում Հայ առևտրական կապիտալի ու Եջմիածնի հզերի
պատմական իղձը։

Եջմիածնն ավետում է Արևելյան մերձավոր յեր-
կաների ժողովուրդներն ստրկացնող ցարական դեսպո-
տիզմի հաղթանակը, համարելով այդ «Ազատության
պահանջի» մի որ «յերբ աշխարհի վրա, նորից պիտի
վերականգնի Հայաստանի դարենքը փառքը խաչի գն-

բությամբ»... (Յերիշե ա. քահանա Գեղամյանց.
«Պատմ. քաղվածքներ» պլակ. 3 էջ՝ 200):

Սակայն Անդրկովկասի նահանջը ցարական ըռնա-
կալության համար ինքնանպատակ չէր, և յեթե Ալ-
եյխին նրա՝ Ասիայի խորքերը թափանցելու, Միջերկը-
յան ծովը դուրս գալու, Հնդկաստանի հանրապահը Ան-
դվայի առաջ փակելու, Դարդանելի ու մի շարք նե-
ղուցներ գրավելու հետագա պլաններն իրադորձելու
նպատակով՝ Անդրկովկասը ողբազործելու գիտավորու-
թյունը, այն ժամանակ թիրես, Եջմիածննը, կվարցներ
իր հմայքը ուռանական նվաճողականության աչքում,
վորքան ել նա «քրիստոնեյաներ» լիներ և չստանար առ-
յուծի բաժինը։ Բայց, քանի զեռ այդ հարցը իր ամ-
բողջ սրությամբ մնում եր Ռուս։ Նվաճողականության
որակարգում, ուստի նրա կողմից անտեսվել չեր կարող
Եջմիածնի նման մի ուժ, վորը նամանավանդ անցյալի
վորձով ապացուցել եր իր համատարմությունը Ռու-
սական միավետությանը։

Երեսանը նվաճելուց հետո, 1827 թվականի հոկ-
տեմբերի 6-ին կազմվում է մի «Ժամանակալոր վարչու-
թյուն», վորին հանձնվում է Երեսանի և Նախիջեվանի
խանությունների բոլոր քաղաքական դործերը։ Պատկեն-
չի նշանակած յեղակ այդ վարչությունը, վորի մի
անդամն եր Ներսես Աշտարակեցին, ինչպես և կայսե-
րական այլ հանձնաժողովների մշակած կանոնադրու-
թյան մեջ, Եջմիածննը լիառատ վարձատրվում է։ —
Կալվածքները թողնվում են անձեռնմխելի, քաղաքա-
կան գործերի քննությունը և դատը հանձնվում է հոգե-
վորականության (տանուտերների հետ) և այլն...

Բայց դրանով չի բավարարվում «հոգեսոր» կենարոն

Եջմիածինը : Ներս ներկայացուցիչը՝ Ներսես Աշտարակեցին, ոդավելով իր դիրքից, մի շտեսնված ռեկտիվ գործունեյություն և ակտում ժահմեղականների տիրապետության օրոք քիչ խախտված իր կալվածատիրական իրավունքների վերականգնման համար : Եջմիածինը վանքերում ողակող կալվածագրերի կամ քարերի վրա փորված արձանագրությունների ոգնությամբ ձգտում և ձեռք բերել վոչ միայն դարերի ընթացքում յերբեմն իրեն պատկանած կալվածքները, այլև կեղծ վալերաթղթերի, շինծու արձանագրությունների ու սուստ վկայությունների միջոցով նա փորձ և անում տիրապետելու և ողատերազմների հետևանքով լքած հողերը ու ամայացած գյուղերը : «Նա (Ներսես Աշտարակեցին) մինչև անգամ ձեռք իր տարածում կողքա աղահանքի վրա, պնդելով, թե դեռևս 7-րդ դարում Հերակլես կայսրը իիշյալ աղահմեց լիծայել և մեր Յեղր Կարողիկոսին»^{*)} :

Իր մի շարք գրությունների մեջ Պասկվիչը վկայում է, վոր Ներսես Աշտարակեցու նպատակն և յեղել տիրապետելու Յերևանի նահանգի շատ հողերը և գյուղերը, դրա համար եւ նա գրում և նախարարին—յեպէ քաղնել Ներսեսին շարումակել այստեղ յար ունեցած ազդեցությունը, այն ժամանակ Եջմիածնի վանքի կալվածական պահանջներն այլևս վերջ չեն ունենաւ :^{**)}

Հասկանալի յե, վոր ցարական կառավարությունը, վորքան և բարձր գնահատեր Եջմիածնի կատարած ծառայությունները, այնուամենայնիվ չեր կարող բավա-

^{*)} Տես Ա. Յերիցյան—«Ամենայն Հայոց կոթողիկ և Պովահայոց 19-րդ» մ. բ. եջ՝ 245:

^{**) Նույնը եջ՝ 240:}

բարել նրա «վերջ չունեցող» կալվածական պահանջներին : Կայսերական հրամանով (Շոպենի^{*)}) տվյալների համաձայն Եջմիածնին ետքում 150 խալվար ամենաընտիր հող Վաղարշապատի դաշտերից, վորը մշակվում եր մեծամասսմբ տեխնիկական բույսերի համար, գյուղացիներից ստացած կոռ ու բեզզարանների միջոցով : Եջմիածնի վրա յեն վերահաստատվում հետևյալ գյուղերն իրենց բնակիչներով հանդերձ ^{**)} Հ. ՇԱԽԱ-ԹՈՒՆՑԱՆԻ իր «Ենակապարհորդություն»... աշխատության մեջ հիշատակում է (հատ. Ա. Ա. եջ՝ 135) և Մուղնի դյուլլ 15 ծուխ, 92 շունչ, վորը նույնպես հատկացված և յեղել Եջմիածնին նույն իրավունքներով : Թաղավորական հրամանով այս դյուղերը հատկացվել եյին Եջմիածնին և ամբողջապես ճորտական կախման մեջ եյին գտնվում :

Ծուխ	Շունչ	Բնդամենը
1. Վաղարշապատ	441	1149
2. Ռշակոն	86	321
3. Մաստարա	97	300
4. Յեղվարդ	41	152
Ընդամենը	665	1.922
		1.705
		3.626

Վանքը Նրանցից ստանում եր, պլանարկ, ամեն մի տնից 1½ թուման : Նրանք պարտավոր եյին վանքին վճարել իրենց ամեն տեսակ յեկամուտների ^{1/6}—մասը, տակ հարկ յեղած մշակը, հնձի ժամանակ տունը մի հնձվոր, հնձած հացը, խոտը դաշտից տուն բերելու

^{*)} И. Шопен—«Исторический памятник состояния армянской области в эпоху ее присоединения к Российской империи»—1852 г. С-П стр. 679—80.

^{**) Ibidem}

Համար պետք յեղած սայլեր ձբխարար և այլն... Ճիշտ այնպես, ինչպես, աշխարիկ կալվածատեր-ճորտատերը ստանում ելին իրենց յենթակա ճորտ դյուղացիությունից:^{*)}

Եջմիածնին ելին պատկանում և բազմաթիվ առևտրա-արդյունագործական ձեռնարկներ, այդիներ, տը-ներ և այլն...

Այսպես որինակ, Յերիցյանի տովալներով նա ունեցել է՝ Վաղարշապատում՝ 3 ձիթհանք, վորը տարեկան 1000 բաթմանից ավելի կանեփի ձեթ և մոտ 300 բաթ-ման հիանալի կնճութի ձեթ եր տալիս. մի գինկ բրնձի, մի խաղախորդանոց (կաշեռործանոց), 8 բնակելի տը-ներ, մի քանի պարտեղներ, քարվանսարա բազմաթիվ կրպակներով, 8 այգի 102 խալքար տարածությամբ, մի քանի աչք ջրաղաց և այլն: Աշտարակում՝ 3 այշի, Ռշականում՝ 1, Յերևանում՝ 8, Շիր-Աբաթում (Փա-բաթար)՝ 1, ընդամենը 21 այդիք, 207 խալքար տարա-ծությամբ, վորից ստացվում եր 240 կարաս գինի և մոտ 200 ոռորլու արժողությամբ մրդեղին:

^{*)} Մեր պատմական դրականության մեջ այն կարծիքն է տիրապետել, թե Հայաստանում ճորտություն չի յեղել: Այսպիս որինակ 1911 թվի «Արք» ամսադրի 2—3 համարում 1861 թվի ուժորմի 50-ամյակի առթիվ գրված Համբարձում Առահելյանի և Պետրոս Զաքարյանի հոգիվաճում ասվում է՝

«Հայ ծողովուրդը չի կարող գաղափար ունենալ նորության մասին, վորպիհետեւ մեր յերկրամ նորություն չի յեղել»:

Նույն բանը կրկնել և «Հարություն Արարատյանի կերծիքը» Պարզող՝ Ա. Ե. Ս.-ն և բաղմաթիվ այլ հեղինակներ:

Իսկ Ալեքսանդր Յերիցյանի խմբադրությամբ Հրատարակվող «Կավազսկա տարիա» ժողովական տպագրիելով 1809 թ. ապրիլի 18-ի Եջմիածնի «Առողջ ժողովի» դատասիանը Գեղամյաների դիմումին (իրենց նախկին հպատակ ժողովրդին ճորտ ճանաչելու»

Յերեանի սահմաններից դուրս 1836 թվին, Եջ-միածնին ելին պատկանում Յելիսովիտոպոլ (Գանձակ) քաղաքում մի մեծ այգի, մի կրպակ և Քարվանսարա: Ալեքսանդրապոլում (այժմյան Լենինական) 12 կրպակ, մի վուռ հացի: Թիֆլիսում՝ 19 կրպակ, 10 տուն, աստրականությունի կամացի վրաստանի՝ արական 523 և իգական 402, ամենն 934 հոգի:^{*)}

Եջմիածնին ելին պատկանում և Կարրի գետի կես ջուրը, Տալմա առուն, վորը ջրում եր մոտ 300 խալքար տարածություն, Շահ-արխը և այլն, նույնպես և մի ընդարձակ խոտհարք, վորտեղից մոտ 100,000 խուրձ խոտ եր հնձվում և այլն, և այլն...

Այս բազմաթիվ և բազմապիսի ազրյուղներից Եջ-միածնը ստանում եր մեծ քանակությամբ արդյունք-ներ, վորը մի բուռն հոգեռականությունը վոչ մի դիմքում սպառել չեր կարող, վորքան և նրանց մուտ զարդացած լիներ տամնուր «Կուլտուրան» վորքան և նրանց նկատմամբ Ճիշտ լիներ ժողովրդակա հայտնի

վկայություն տալու մասին, վոչ միայն գետ և ճորտության գոյության մտքին, այլև առաջ և քաշում մի չափազանց սխալ թեզ, այն մասին, վոր «Оно не только отказалось им в выдаче свидетельства но и протестовало против всякого крепостного права и домагательства.—ГЕГЕМЯНОВ» (1872 թ. № 1—стр. 25):

Այս հարցերը, վորոնք ի դեպ, մեր պատմության ամենակու-սական բնադրավախին են պատկանում, վորին մենք կանդրալառ-նանք մի այլ անդամ, անկասկած, կարու են մարքսիստական պատ-մադրության մանրակրկիտ ուսումնասիրության: Սակայն Եջմիած-նի վերաբերմամբ մեր ցույց տված որինակները վկայում են միան-գամայն հակառակը: Մնում և միայն ավելի լիազնելու ու հարը-տացնելու այն:

^{*)} 1817 թվի Դեկտեմբերի 24-ին Գորուց դրան իր նամակի

առածը՝ «սար ու ձոր տերտերի փոք»: Այդ արդյունքների շուկա գուրս բերելը և վաճառելը (մանալանդ, վոր արդեն սկսել եր կանոնավորվել Աբարանի վրայով թիֆլիդի հետ առետում և այն)...անհրաժեշտորեն «սուրբ հայերին» հրում եր դեպի «մաքուր» ու անխարդախ» մի գործ—առեւտուք: Եեվ զարմանալի չեւ, վոր հատկապես կենտրոնական քաղաքներում և (թիֆլիդ, Ալեքսու, Վաղ-պատ), վոր որ-որի վրա աճում և Եջմիածնապատկան կրպակների, առեւտրական տների թիվը: Զեռք բերելով լայն հնարավորություններ իր ստացած բնարդյունքը հեջուն դրամի վերածելու, դառնալով ամենախոշոր դրամատերերից մեկը, Եջմիածնը զնալով ավելի ու ավելի յե գրավում այդ շահավետ գործի մեջ և մի պահ կարծես մոռացած «հողեռ» գործը, կապիտալի կուտակման նախնական շրջանի հատուկ մեթոներով կոթնած հոգեւոր ու մարմնավոր զենքի ուժի վրա, նա բուռն թափով անցնում անտեսական արշավանքի, ոգտվելով ճորտատիրական կարգերի հովանավորությունից, ոգտվելով իր ձեռքում յեղած դամբջանիննես վարդապետը գրում ե:

«Սարք Եջմիածնն նորու թ (2) անձանց տարեկան հարկն ստացալ ունիմ և անվանք նոցա գրյալ, վորսկս հրամայալ եցիր և մյուսները յուրաքանչյուր տեղիս վորք կան բնակյալ, յեթե տեր կամեցի... (մի բառ աղավաղլած) և անվանք նոցա և զրելու: (Եջմիածնի պետական արխիվ № 143):

1817 թ. Նորաշեն յեկեցեցու քահանաների կազմած ծնվածների, մահացածների, մկրտածների մատյանում հիշվում է.—

«Եջմիածնա նորու Խարազնունինի վորդին մկրտյալ և թաղյալ 1817 թ.» (Եջմիածնի պետական արխիվ № 19):

Եեվ այս ամենը գոյություն ուներ այն շրջաններում, վորք կառավարում եր «Ամեն տեսակ ճորտական իրավունքի դեմ բոլոր Ներսես Արքեպիսկոպոս Աշտարակեցին...

տական իրավունքից և վաշխառվական նպատակներով դորձագրելով թե իր տնտեսական յեկամուտներից (վուրը Շոպենը հաշվում է տարեկան մոտ 100.000 ռ. վորին վոչ մի գեպքում համաձայնվել չի կարելի) և թե «հավատացյալ հոտից» ու «սուրբ մասունքների» շահավետ վաճառքից իր մոտ կուտակված փողը ամենազգվելի բունի միջոցներով խլելով այդ նույն «Հավատացյալ հոտից» հոդը ու ինչըը, սեփականազրկելով, ձորտացնելով նրան «ամենայն հայոց հաստատությունը» «հոգեւոր» ու «կրօնական» կենտրոն Եջմիածնինը իրոք դառնում է կայսերական տնից հետո ամենախոշոր կարվածատերից մեկը:

Եջմիածնի կատարած անտեսական այդ ելույթին ցուց ե տալու, ընթերցովին մի անգամ ընդմիշտ նրա կալվածատեր-ճորտատեր լինելը ապացուցելու և համոզելու համար բերենք 19 դ. վերջերին և 20 դ. սկզբներին վերաբերող մի քանի փաստեր ևս:

Միիթար վարդապետի տվյալների համաձայն Եջմիածնին են պատկանել հետեւյալ գյուղերն իրենց տարեկան հասույթով:

Ա Ն Ո Ւ	Տարածություն		Տարեկան ստացած յեկամուտը	
	Դեսկատ.	Քառակ. ուժ.	Ուրըի	Կ.
Վաղարշապետ	7312	1890	16.000	—
Յեղվարդ	10106	1200	10.000	—
Ուշկան	4052	2200	4.000	—
Մասուարատ	8000	—	3.700	—
Մուղնի	981	1080	400	—
Բջնի	4000	—	2.800	—
Գյորեկիսա (մի մասը մոտ 200 տուն)	—	—	800	—
Մարցա կալվացքը (Ղարսու, Շամուտ, Աթան, Ահսիզոր, և Մարց գյուղերով)	9000	—	400	—

Բացի այս գյուղերից Եջմիածնին ելին պատկանում:

Վաղարշապատում		Մյուս 30 դեռ. տարբաժ. 1000 ռ. ա. արդյունքով.	
Ուշականում	2 3 25	3 350	2 3
Աշտարակում	3 3 5	3 350	2 3
Դանձակում	4 3 —	3 300	2 3
Թիֆլում	2 4 32	3 340	2 3
Գետարգելում	600 դեռ. վարելահող	1500 ռ. արդյունքով	
Դայլար	613 3	1230 3	
Բյուզաչում	195 3	150 3	
Վաղ-պատում	1200 3	7354 ռ. 75 կ. 3	
Վաղ-պատում	400 դ. («ըլու») արդյունահող 450 3		
Ամբերտում	300 3	157 3	

Հյայր աթոռիք հողերի ընհանուր տարածությունը Միիթար վարդապետի հաշվով յեղել և մոտավորապես 47.000 դեյատին, վորից տարեկան ստացվել է 51.000 ռ. արդյունք, *) չհաշված այլ անշարժ կալվածքներից, կրտակներից, ջրաղացներից, հանքերից, տներից և այլն... ստացած յեկամուտները**). Եջմիածնի պաշտոնական որդան «Արարատ» ամսաթերթի 1910 թվականի համարներում վորտեղ տպված են աթոռապատկան կալվածների ուսումնասիրության արդյունքները, յերեսում ե, վոր Եջմիածնը ունեցել է 21.000 դեռ. և 7 ջրաղաց Մարգար կալվածքում, 25.000 դեռ. Տաթկա կալվածքում, վորտեղ գտնվել են և 9 յենթակա գյուղեր: Հաղարծնի կալվածքում 750 դեռ. Խոթ և Գանձա-

*) Այս թվերն արդեն ինքնին մատնում են Մի. Վարդապետի տեսդեմցիող դեմքը. Ուշականի հողի ընդհանուր արդյունաբերության պայմաններում 25 դեռ. արդյունք 350 ռ. արդյունք ստանալը—Երբեք համաժական չե: Առավել և Եջմիածնապատկան ընտիր այլ չենքում:

**) Տես «Արշակունյաց որթերը» 1905 թ. № 32 7 հոկտ. թիֆ-

սարի կալվածքում 56.000 դեռ. վորտեղ յեղել են մռա 40 մանը գյուղեր: Այս կալվածքներից Եջմիածնը ստանում եր խոշոր յեկամուտներ (այսպիս որինակ: 1881 թվին միայն Քիշնի կալվածքից ստացել ե 26.800 ռ.) վորը վոչ մի կերպ չի կարելի համեմատել Մխիթար վարդապետի 51.000 ռ. չի լին դումարի հետ: Նույն և մյուս կալվածքների մասին: Այսպես որինակ: 1890-1905 թ. թ. Սինոդի որագրությունների հիման վրա մենք հաշվել ենք.—

ա) Վաղարշապատում՝ —17 այգի, 3 ձիթհան, 8 աչք ջրաղաց, 5 կրպակ և մի քանի բնակելի տներ:

բ) Ուշականում՝ —9 այգի, 1 ձիթհան, 14 աչք ջրաղաց մի քանի կրպակներ և տներ:

շ) Յերկանում՝ —7 այգի, 8 կրպակ և 2 մեծ տուն:

դ) Չորագյուղում՝ —4 այգի, մի սաղարան, 2 ջրաղաց.

յե) Աշտարակում՝ —5 մեծ այգի, զ) Փարաքարանում՝ —6-ը, ե) Թիֆլիզում՝ —2 այգի 10 բնակելի տներ. ը) Գանձակում՝ մի մեծ այգի, մի կրպակ մի քարվանսարա և այլն, և այլն...

Վոչ մի կասկած, վոր 51.000 ոռուք. յեկամուտ, յեթե վոչ ավելին, հենց այս մի քանի ձեռնարկները կարող ելին տալ մի տարբիա ընթացքում և վոչ թե այն հարուստ և ընտիր կալվածքները ու հողամասերը, վոր ուներ Եջմիածնը, վորը նրա համար յեկամտի ու շուայլ, ցոփի կյանքի անսովոտ աղբյուրն եր, նրա գոյության խարիսխը**)

*) Համբարձում Առաքելյանը իր հանրագիտական բասարանի մեջ հրատ. 1912 թ. (702) Եջմիածնի ստացած յեկամուտը (տարեկան) հաշվում է մոտ 150.000 ռ., իսկ 1890-ական թվա-

Համենայն դեպս, վորքած ել վիճելի լինի յեկամտի հարցը, այնուամենայնիվ մեր վեր հիշած փաստերը, վորոնք ի գեղ շատ հեռու յևն ամբողջը շինելուց, ան-վիճելորեն հաստատում են, վոր Եջմիածինը «զուս կը բոնաբարոյական՝ կենարոն չի յեղել. նա յեղել և առաջին հերթին կալվածատիրական կենարոն. տիրապետուլով հսկայական տարածություն ունեցող հողեր, նորտացնելով ու ստրկացնելով բազմաքիչ գյուղեր և տասնյակ հազարալոր աշխատավոր գյուղացիներ, բարբարսարար կողոպտել, ծծել և նրանց աշխատանի արդյունքը և ապրել այնպես, ինչպես ապրում եյքին ոռու ցարի իշխանակորթերը, կոմսերն ու գրաֆները: իսկ ամենը նա կատարել է թագնիված Փարազայի տակ — կրոնաբարոյական ժարողների տակ:

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵԶՄԻԱԾՆԻ ԿԱԼՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Հայ աղղային կղերամիտ պատմիչները, Հայաստանի նվաճումը ցարական միապետության կողմից ներկայացրել և դրվագել են, վորպես «Հայ ժողվրդի», «Հայ Ռայայի», «Վերածնության» պատմական խոշորագույն մեկը: Յեթե այդ նիշու և Հայ բուժուակայի ու խոշոր կալվածատիրության վերաբերմամբ, ապա միանդամայն սիալ և Հայ աշխատավորության նկամամբ:

Անդրկովկասում քառորդ դարից ավելի տեղող ան-

կաներին Հայաստան ճանապարհորդած անդմացի կինը իր «Armenia» աշխատության մեջ գնում է մոտ 8000 անդմական գումբ:

ընդհատ պատերազմները յերկու աշխարհակալությունների միջև կործանարար հետևանքներ ունեցան դյու-ղացիության համար: Անվերջ պատերազմները քայլա-յեցին յերկրի վող տնտեսությունը, ծայր առած գաղ-թականությունը, միմյանց հաջորդող սովը, յերաշար և ժանտախտը ամբողջովին ավերեցին ու ամայացրին մի շարք ըլչաններ:

Պակասը լրացրեց ցարական իշխանությունը: «Հայ ժողովրդին» խոստացած ազատությունը այս ու այն չափով ստացան իշխող գասակարգերը, իսկ դյուղացիությանը աղատության վոխարեն բաժին հանվեց ա-վելի վատթարագույն ձևի շահագործումն ու ճնշումը: Յեվ այդ հասկանալի յե: Ճորտատիրական պետությունը չեր յեկել աղատելու և չեր ել կաբող աղատել Անդրկովկասի ճորտ գյուղացիությանը. յեթե այդ անողը լիներ, նա կաներ իր յերկրում. նա գալիս եր Անդրկով-կասն ավելի ճորտացնելու, ստրկացնելու և վոչ թե ա-ղատելու. և ինչպես տեսնում ենք Ռուսական տիրապե-տության շրջանում, Հայաստանի գյուղացիության դրությունը քանի գնում, այնքան ավելի ու ավելի յե վատանում:

Ահա, թե ի՞նչ է պատմում 1840-ական թվականնե-րին Հայաստանը ընջած դերմանացի ճանապարհորդ՝ Մարից Վագները դյուղացիների դրության մասին.

«Այս դյուղացիները (Սեվանի չրջանի Վ. Պ.) 1829 թ. յեղած դաշինքից հետո իրենց յերկրից յե-լան ու յեկան այստեղ, բայց այս փոխողության վրա հիմա զին չեն, ամեն մեկ տանտեր կամ ընտա-նիքի գլուխը տարեկան յերկու արծաթի ոսոբի դըլ-լսահարկ պիտի վճարե և 8-ից մինչեւ 12 արծաթ ո.

Հողի հարկ .այսչափ տուրքը այսպես աղքատ մարդ .
կանց համար իրավես շատ ե» :*)

Դյուղացիները գառնությամբ հալորդում են ոտար-
յերկյա ճանապարհորդին թե .—

... «Ծիռու հարկահանը մեղ վրա անջափ բեռ
կդնե , վոր մենք ամենաբերի տարիների անխոնջ
աշխատանքից և սակավ կյանք վարելուց հետո
անգամ այդ բարձր տուրքները վճարելու կարողու-
թյուն չունեն :

... «Եվ թեպետ քրդերից չափազանց վախե-
նում ենք , այնուամենայնիվ ավելի հոժարությումք
կուզեյինք զնալ մեր նախկին բնակության տեղը ,
վորտեղ անոթություն չեյինք դում , ուր մենք կա-
րողանում եյինք բավարարել մեր հարկահավաքնե-
րին և ծեծ ուտերուց վախ չունեյինք , ինչպես այս-
տեղ Ռուսաց մեջ ունենք և ընդհանրապես այնպի-
սի դառն քաղաքության մեջ չեյինք , ինչպես այս-
տեղ » (եջ՝ 115-116) :

Տնտեսական այս ճնշումներին ու թալանին զուրըն-
թաց Անդրկովկասի աշխատավորությունը «վայելում»
եր և հաղթանակած ցարական պաշտոնյաների ծեծն
ու բռնությունները :

... «18 տարեկան յերիտասարդ թաթարը , ա-
ռանց այլ և այլության ծեծ ուտելու տեղն յեկավ
ու չվանով ցիցը կապվեցավ ... Սոսկալի հարված-
ների տակ (բողկի) թեպետ միաը կտոր-կլոր յե-
ղավ , բայց և շավի վոչ մի աղաղակ չհանեց . 35-ը՝
հարվածից ահագին ճայնով Ռուսաց աստծու և
կայսեր դեմ սարսափելի հիշոց մը տվավ ու դեռ
անսասան կկենար . բայց յերբ վոր ուստ պաշտոն-
տերը տաքացած յերկարով ճակատը կրվեց , այն
ժամանակ այս անընկեցի հոդին սկսավ սասանի ու
բերանը փրփրալով անշան խոսքեր ու հեծություն-

*) Մ. Վագներ — Ճանապարհորդություն ի Հայաստան .
Բարչա . Հ. Փելլապոս Ճամբյանի . Վիեննա 1851թ . եջ՝ 25—26:

ձայներ կանել : Այս որինակը մարդ կսուկացնէ»
(եջ՝ 10-11) :

Եկրիցանը պատմում եւ՝ վրը 1837թ . հոկտեմբե-
րին Նիկողայոս Լին կայսրը Հայաստան յմկած ժամա-
նակ հենգ առաջին քայլեց ունկնդիր յեղալ լնակիչների
բաղմաթիվ տրտունջներին ու բողոքներին :

«Թագավորին ակնհայտի ցույց տալու համար
իրենց կրած նեղությունները , միամիտ բնակիչները ,
Ռուսաց վոչ լեզու և վոչ որենք իմանալով , տարո-
ւինակ և պարսկական աշխարհներում գործ գրվող
միջոցների եյին դիմում . նոքա փոռւմ եյին ճանա-
պարհին չոր խոռ և ցախ ու կրակ եյին տալիս այդ
կայսեր առաջ կամենալով ասել , թե «ահա մենք
ել այսպես ենք այրվում մեր իշխանակորմերի ձեռ-
քից» (մաս . բ . եջ՝ 434) :

Իսկ Սարդարաբաթ հասած ժամանակը մի հայ թա-
գավորին ներկայացնում և փետրահան արած մի լերկ
ու նիկար ամազակ , կամենալով հասկացնել , վոր պաշ-
տոնյանները իրենց այդ աֆլորի որն են հասցեի և այն ,
և այլն ...

Այս և նման որինակ բաղմաթիվ փաստեր պարզ
ցույց են տալիս , վոր դյուղացիության դրությունը
այս նոր նվաճողների տիրապետության շրջանում տ-
վելի ծանր եր , քան անգամ բարբարոս ու բռնակալ հա-
մարված նախորդ աշխարհակալությունների որոք :

Այդ ընդհանուր դժբախտություններից , շահագոր-
ծումից ու ննջումներից գերծ չեյին և եջմիածնաղատ-
կան գյուղացինները : Սակայն ամենամեծ դժբախտու-
թյունն այն եր , վոր վերջիններս առավել խստությամբ
կեղեգում եյին և այս յերկորդ տիրերի կողմից : Յե-
թե առաջին դեպքում գյուղացինները գործ ունեյին մի-
այն մարմարավոր իշխանակության հետ , հարկեր եյին վր-

նարև միայն երան. ապա այսուհեղ, Եջմիածնապատկան հոգեբում հարկիր ու տուրքեր վճարվում եր և հոգեոր և մարմթավոր իշխանությանը: Յերկու դաշնակիցները՝ ճորտատիրական պետության և Հայ խոշոր ճորտատեր— կալվածատեր Եջմիածնի շահազործումը, այնքան բարբարոսաբար եր կատարվում, վոր կարճ ժամանակվա ընթացքում վանքապատկան մի շարք գյուղեր հյուծվում, քայլայլում ստրկական վիճակի յեն հառում, կորցնելով իրենց վճարությունը:

Այս գրությունը ստիպում է Յեփրեմ Կաթողիկոսին միջոցներ ձեռք առնելու նման յեկամուտներից չըզրկելու համար: Սուածին միջոցը լինում է այն, վոր նա դիմում և կայսրին՝ Եջմիածնապատկան գյուղերին ազատելու արքունի հարկերից, և բացառապես իրեն թողնելու: «Ամենալողորմած» կայսը նկատի առնելով Եջմիածնի մի շարք ծառայությունները 1836 թվի հունիսի 5-ին հրամայում և կովկասի կառավարչապետ Խոգինին, վոր՝

«Ի նկատի առնելով Յեփրեմ կաթուղիկոսի ամենահպատակ աղերսագիրը... Յես արդարացի համարեցի այդ վանքին պատկանող Վաղարշապատ, Մատարա, Ոշական, Յեղվարդ, Մուղնի, Ֆրանգանոց գյուղերն աղատել այսուհետեւ ցնոր տեսություն (կարգադրություն) ամեն տեսակի արքունի հարկերից և սովորական բնդյարաներից միայն այն պայմանով, վոր վանքի կողմից նոցա նորանոր հարկերով չծանրաբեռնեն և բավականանան այն հարկերով ու ծառայություններով, վոր պարուական ելին նոքա մինչև այժմս վճարել Եջմիածնին:

Նիկոլայոս»:

Սակայն նման միջոցներն ու ձեռնարկումները յերբեք եւ չեն թեթևացնում գյուղացիության դրությունը, քանի վոր Եջմիածնը շարունակում էր նրանց շահա-

գործել, թե իր և թե իր գաշնակցի փոխարեն: Դեռ ավելին: Անդրկովկասում առեվտրա-արդյունաբերական ու վաշխառուական կապիտալի զարգացման զուղընթաց դնալով ավելի ու ավելի յեւ ուժեղանում գյուղացիների շահազործումն ու կեղեգումը: Յեթի 30-40-ական թվականներին Եջմիածնը իր ճորտ գյուղերից վերցնում էր ամեն տեսակ արդյունքների ^{1/6-րդ} մասը, ապա 19-րդ դարի 2-րդ կեսում՝ այդ հասցնում և ^{1/5-րդի}, իսկ մի քանի տեղերում՝ ^{1/4-րդի}, առանձին և ստանում այդեհարկը, բարբակի բահրան և այլն...

Այսպես որինակ Վաղարշապատ գյուղից ստացել ե՝
1895 թ. դրեն 321 խալվ. բամբ. բահրա 3000 ու. այդեհարկ 2020 ու.
1899 թ. » 414 » (տվյալներ չկան)
1900 թ. » 591 » » » 4000 ու.
1887 թվականի Սինոդը վորոշում ե՝

«Վանքային չեն գյուղերում, վորտեղ հաստատված են ուստավինի գրամոտաներ, վանահայրերը պարտավոր են ամբերի ստանալ բահրա և սահմանված հարկը ամեն տեսակի հողերի համար, վորոնք գտնվում են ժողովրդի ձեռքին, իսկ այն գյուղացիները, վորոնք չեն կաղմված ուստավինի գրամոտաներում քահրան և հարկը կապալով չտալ այլ աշխատել ստանալ անձամբ կամ հավատարկմ մարդկանց ձեռքով»:

1910 թվականի «Արքաբատ» ամսաթերթում մենք կարդում ենք. —

«Գյուղը (Վաղարշապատ Վ. Պ.) վանքին տալիս ե յերկրային բերքի մեկ հինգերորդ մասը (բահրա), իսկ վաղ ժամանակներում կոռ ու բեզյառ և

*) Թալես Ալեքարեգյանը «Բահրան ու մուլը 17 և 18-րդ դ. դ.» («Նորք» գիր № 2, էջ 142) հողածում, հենվելով Զամ-

մշակագործություն, վորիդ այժմ զյուղացիք տառ
լիս են միայն վանքին հարկավոր մշակներ» (էջ՝
64):

Սինոդի վորոշումներից պարզվում է, վոր Եջմիածինը
բացի այս արդյունքներից ու սպառագիր հարկահավա-
գություն իրավունքներից մինչև 20-րդ դարի սկիզբը
սպառագանել եր և ֆեռդաներին հասուկ մասն վերցնելու
երավունքը:

Ահա այդ վորոշումը.—

«Ապրիլի 14—. ընդմիշտ վերջացմել Վաղար-
շապատի իրապարակի վրա բեռնակիրներից, սայլե-
րից և զանազան մասին մունք նյութեղեններ բերող
և վաճառող զյուղացիներից հարկ ստանալը և խըն-
դրել Վաղ-պատի պ. գավառապետին կարգադրել
հայտնելու գավառի գյուղացիներին Սիմոնի այս
կարգադրությունը: Պատվիրել նաև մայր արքուի
վաճական կառավարության ենուացնել իր կարգած
հանձնաժողովի և ներկայացնել սինութ հավաքած
դրամներն ու անդրագիրն մատյանները»*:

Եջմիածնի այս քայլը, անպայմանորեն կատար-
վում եր զարգացող կասլիտալիդմի, չուկայական հա-
րաբերությունների ընդարձակման աղջեցության տակ,
վորին սկսել եր հարմարվել նա, վորուեղբելով նրանից
միաժամանակ շահագործման ինտենսիվ ձեւիներն ու մե-
թոդները: Վորպես անհրաժեշտ պահանջ այդ ամենի,
նա անցել եր կապալավարձի սիստեմին: Իրեն յևթա-
կա կարվածքները ամենարար կապալավարձի սկրզ-
բուի տվյալների վրա, այն կարծիքն և հայտնում, վոր բարձ
պետության տրվող հարկ եր, բայց Եջմիածնի բահրա ստանալու
վերոհւյալ և մի շարք այլ սրբնակներ՝ 18-րդ դարի վերջին և
19-րդ դարի սկզբին վերաբերող լուրջ կասկածի տակ են դնում
թափառ միայն պետական հարկ լինելու խնդիրը»¹⁾

*) Ցես «Արքան» 1903 թ. Հունիս եջ՝ 583:

բաւերավ տալիս եր կապալառուներին մեկ և յերբեմն
մի քանի տարի ժամանակով համապատասխան վարդե-
ռաթղթերով ու արտօնություններով հանդերձ. վեր-
ջններս ել յելնելով իրենց տարեկան ստանալիք ար-
դյունքից, մինչեւ վերջին շունչը անողոքարար շահա-
գործում ու թալանում եյին խեղճ գյուղացիներին:
Թե վորքան զգվելի ձեւերով եր կատարվում «Հոգե-
վոր» Հոգերը հայրերի այդ գործարքները, ցույց ե
տալիս հետեւյալ որինակը.—

«Պաշտոնական ծանուցում. Սուրբ Եջմիած-
նի կալվածք՝ Վաղարշապատ, Յեղվարդ, Ոշա-
կան, Մաստարա, և Մուղենի գյուղորայքը և ավե-
րակ գյուղատեղին գիտարգելա՝ յուրյանց պատ-
կանյալ սահմանով հանդերձ կապալով կտրվեն:
Ուստի կիրատարակենք ի գիտություն ազգայնոց
վոր ի՝ Ռուսաստան, Վորպեսզի ցանկացածք որինա-
վոր գրավականով փութան ներկա գովել անըն-
դախուսության, վար պիտի հառաջիկա ապրիլ 7-ին
և 9-ին ի՝ Ս. Եջմիածնին»*

Նմանորինակ հայուարարություններ, վորոնք հի-
շեցնում են ուսւած. ճորտատերերին, Եջմիածնի պաշտո-
նական այդ թերթում դուք հաճախակի կհանդիպեք:
«Ամենայն հայոց Հանրապետությունը» «որինավոր
աճրդախոսությամբ» վաճառում եր վոչ միայն իր սե-
փական չենքերն, այդիները, հանքերը, անտառները,
ջրերը, խանութները, անասունները, այլև դրանց հետ
միաժամանակ իր ճորտ գյուղերը գյուղացիներով հան-
դերձ: Զանազանակերպ աղբյուրներից ստայած մեծ
արդյունքները (ըրբնակ 1803 թվին Յեղվարդ գյուղից
այնքան ցորեն ե ստացվում, վոր անհրաժեշտություն

) Ցես «Արքան» 1896 թ. «Ժ» վերջ էջ՝ 148— «Կատա-
րաբությունների բաժին»:

Եզրացվում տեղում ցորենի մի հսկայական շտեմարան կառուցել է ջմիածինը զանազանակերպ ել շահեցնում եր, նա տալիս եր փոխառություն, Զ-ով Ռուսական ու արտասահման բանկերին, բարձր տոկոսով տալիս եր պարտքի տակ թաղված գյուղացիներին, վրոնք յերածներին սերնդի սերունդի չեյին կարողանում դուրս դալ այդ պարտքի տակից:*

Աւա, այսպես եր կատարում իր «պարտքը» «Հայ ժողովրդի» հանդեպ Եջմիածինը, այսպես եր «Հովանալորում» ու «պահպանում» իր «Հավատացյալ հովը» «ամենայն հայոց» հաստատությունը: Յեզ բնական ե, վոր այդ գրությունը յերկար տեվել չեր կարող:

Թշվառության ու դառնության կրակի մեջ այրվող գյուղացին, վրքան ել նրա ուղեղը կաշկանդված լի-

* Ասկայն շահագործման ճեմերի այս աստիճան ակնրատ մնելու դեպքում անգամ, հայ բուրժուազիայի իդեոլոգները չեն քաշել քողարկելու յեկեղեցու վորպես այդպիսինի բնույթը: Այդ իդեոլոգներից մաքսիմի դիմակի տակ դործող հայտնի հականդապուրական Դամիր Անանունը հետեւյալն ե լրում—

«Հայոց յեկեղեցին նախորդ դարի սկզբում ինչպես և այժմ իր պարագերը հոգում եր Հավատացյալների կամավոր նվերներից գոյացած միջոցներով: Նու պարտադիր տուրքահալավուրյան իրավունք չուներ: Այդ հանդամանքը անդադրում ստիպում եր յեկեղեցական դասին լուրջ ուշադրություն դարձնել յեկեղեցու նյութական աղբյուրների վրա, և որն ի բուն մտահոգել նրանց ցամաքելու (sic!) մասին» (ընդդումը մերն ե) («Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դ.» 1916 թ. հատոր 1-ին, էջ՝ 88):

Մենք ամելորդ ենք համարում պատասխանելու հայ յեկեղեցու ուշադիր ընթերցողի համար դժվար չեն ըմբռնել նրա վոզք սիսականությունը:

Ներ կրոնական խալարամիտ գաղափարներով, այնուամենայնիվ նամի որ պետք ե թոթափեր իր ձեռքերը և փորձեր ազատելու ճորտության ու ստրկության կապանքներից:

Կուտակվող այդ դժգոհությունների պորթկման մը-զիչը հանդիսացավ 1905 թ. Ռուսաստանի և Անդրկովկասի պրոլետարիատի հերոսական պայքարը: Ճիշտ ե, Հայաստանում հեղափոխական այդ շարժումը չստացավ այնպիսի սուր կերպարանք, ինչպես Ռուսաստանում կամ համառ գորիացիների մոտ—Վրաստանում, բայց և այնպես անդամ տարերային յելույթները լուսեցի, Եջմիածնեցի գյուղացու «Հոդ և Ազատություն» լրգունդի ժողովանքը, վորը միախառնվում եր (վորքան ել թույլ) Անդրկովկասի և վորը Ռուսաստանի հեղափոխական պայքարի հետ, արդեն իսկ ահ ու սարսափեր ներշնչում և մեր սեփականություններին:

Ահա թե ինչ ե գրում այդ մասին Շահումյանի դեկալարությամբ հրատարակվող բայլէպիկյան «Կայձ» թերթը «Հեղափոխությունը մի քա զրում» հոդվածում::

...«Եջմիածնից բափիլում են կոնդակներ, «հայ ազգը» իրավունքներ և վոր ստանում ե... ոեփորմները կայծակի արագությամբ հետեւում են միմյանց... բարենորոգումների տեմբը յերեվի մեր սխովասիկների ամրացում սաստիկ ե, եպիդեմական և դարձել և բախտավոր հայությունը շվարած, զմայլված նայում ե կարուղիկուի թեղինեցիայի կողմը:»

Այս որերս ել հայ կիթը ստացալ իրավունք տերությունը, տիրացաները, և շատ ուրիշ «ազգուգաւոր» քանրելու...»

Ի՞նչ ե պատահել: Ժողովրդական պատագրական շարժման ազդեցությունը:

բյան տակ և մեր սեփագույնները նահանջեցին նընց բնության հասունկ «լիրիքալիդմավ» և առաջ գմացին «ժողովրդի» պահանջներին...»

Հեղափոխության աղբեցության տակ «որ որի վրա ավելանում են կալվածատիրական վանքապատկան հողերի «ապրինի» բռնազրավումները ապստամբված էջմիածնապատկան ճորտ գյուղերը (Մարց. Լորուս, Շամուս և այն խլում են վանքապատկան հողերի մի ժամանում որինակ՝ վերոգրյալ գյուղերի հողերի 21.000 դեսյատինից 1906 թ. մնում ե 7864 դես.) հրաժարվում են վճարել տուրքերը և այն... Դրությունն այնուեղան և հասնում, վոր եջմիածինը մի քանի մշտական փաստարաններ և վարձում պետական ատենատեղիներում լուծելու գյուղացիների և վահքի միջև առաջած վեճերը: Բայց այդ բոլորի մեջ «ցավալին» այն ե՝ ինչպես գրում և «Արարատ» թերթը, վոր «Աշուարակի շրջանի գյուղացիները իրենց սիստեմատիկ խլսումներով խանգարում են հայրապետական ամրանց—թյուրականում գտնվող լիեափառի համգիստը...»

Հեղափոխության պարտությունից հետո ել հողային այս վեճերը շաբունակվեցին սակավահող գյուղացիության և եջմիածնի միջև: Բայց այս անդամ արդեն, ողտվելով տիրող ռեակցիայից, մոռացած անցյալի «լիբերալիզմը»: Եջմիածինը այդ վեճերը լուծում եր կատարյալ Ռեվանչի ճանապարհով:

Ահա ձեզ մի ցայտուն որինակ, վոր թերեւս բավական կլինի ցույց տալու և համոզելու անդամ ամենադժվարին համոզվողներին:

^{*)} Տե՛ս «Կայեց» 1906 թ. 9-ը հուլիսի № 36.

...«Յեղվարդը վանքապատկան գյուղ ե և ունի 4.000 դեսյատին հող, բացի վանքապատկան հողերից ունի և արքունի հողերը: Մակայն շնորհիվ այն բանի, վոր այդ հողերը կանոնավոր կերպով չի բաժանված ժողովրդի և նախարարկան սխալման գոյուրյուն չունի այդ մծաքանչով կողերը կենորնացել են գրեթե մի քանի կոնկակ մարդկանց ձեռին: Զրի պակասության պատճառով հողը շատ քիչ բերք ե տալիս, ուստի անջրդի հողերը, վորոնք ԲԱՇԱՐԱՊԵՍ ԱՂՔՍ ԴԱՍԱԿԱՐԳԻ ձեռքին են գտնվում, տարեկան մի յերկու կտոր ցանկու են առնում, բայց այն ել հանախակի չըրվելուց վՈՉՒՆՉՉԵՆ ՍՏԱՆՈՒՄ և մնում են ՔԱՂՎԱԾ: Վերջերս հասարակության մեջ առաջ յեկալ հողարածանության հարց, սակայն վոչ մի հաջողություն չունեցավ, շնորհիվ այն մարդկանց, վորոնց ձեռքին կենորնացած և հոդի մեծ խանկությունը... Բայց փերապես մի կերպ հաջողվեց Մինորդի համաձայնաթյունը ստանալ... Մինորդ ուղարկեց մի հողաչափ, վորը Խաչիկ վարդապետի հետ բոլոր հողերը և մարդագետինները չափելով սկսեցին բաժանել, բայց ժողովուրդը համաձայն չեղավ. դրանից հետո ուղարկվեց մի ուրիշ հողաչափ, վորը գյուղացու 20 լիտր սերմի տեղու դուրս ե բերում 30 լիտր. Յեկալ մի ուրիշը Խաչիկ վարդապետը խորամանկությամբ ժողովրդի ստորագրությունը ստանալով, թե իբրև ժողովուրդը համաձայն և Խաչիկ վարդապետն ինչպես քեֆն ուղի այնպիսի ել բաժանի. սկսեցին բաժանել... հողը բաժանվեց անարդուր կերպով, հոդերի ամենալավ մասը վերցրել եր վանիքին՝ դպրոցի ու յեկեղեցու ամունով և սվել գյուղի կուլակներին, վորպիսդի նրանց ձայնը դուրս չգա:

Թշվար գյուղացիներն ել ջուլ ու փալաս չթողին գրավ գրին, վոր վաւառվայի վող տան և ուրախուրախ վաղ եյին տալիս կարծելով վերջը հողատեր կդառնան. բայց իգուր... Հիմա յեկեք մեր

Հասարակությանը ասացեք ինչու չեք ձեր առողջ
ու լիձը մաքում, յեկեղեցին նորոգում... Նրանք
կապատճանեն: Մեզ պիտի չի այդ բոլորը, ում
իոդ ունի, քոյ նա ցավը բաշի, ում ջրովի հոդ ու-
նի, քոյ նա մտածի... Սկսեցին մարագմերը կրա-
կել, վորս առիթ զարձավ հասարակության մեջ
մի շարք անախորժ գնապքերի: Խակ այժմ հողա-
զուրկները մտմտում են ԳԱՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ մի
ժիռք. Վորս վերջին ժամանակներու նկատվել է
նույն պատճառից դրդված մի քանի զյուղե-
րում»:*)

Զափաղոսց պարզ եւ արտահայտված, կոմենտարիա-
ների կարեւ չեմ: Եջմիածնի լծի տակ յերկա՞ր ու ձիգ
տարիներ նարտական պարտավորությամբ տառապած
զյուղացիները բոլոր հույսերը կորցրած փորձում են
դավանափախուրյամբ գոևի ազատվել «ամենայն հայոց
հաստատություն», «Հայ աղպի հոգեոր Հայր» ու Հայ
աղպի «կաթողին մայր» Եջմիածնի ձիբաններից...

Բայց այդ խելք ու կրակ ձեռնարկումները չաղա-
տեցին և յերբեն չեցին ևլ կարող ազատել գլուղացիու-
թյանը, Եջմիածնի այդ ուղղակի սպանիչ շահագործու-
մից:

Միայն և միայն մեծ Հոկտեմբերը ու նրա մի ողակ
նոյեմբերը—պրոլետարական հեղափոխությունն եր,
վոր յեկավ ու ազատեց նրանց դարտավոր ստրկությու-
նից:

*) Տես «Դամն» 1912 թ. № 53, 25 հոյեմբ. Յերեվան «Հո-
գաբառմանության խնդիրը Յեղվարդում» վերտառությամբ Հոգ-
գաբառմանության խնդիրը Յեղվարդում» վերտառությամբ Հոգ-



ԳԻՒՅՐ 10 ԿՈՊ. (1 մ.)

Տպագրվում է յեկ տաւով լույս կտեսնի
«ԵԶՄԻԱԾԻՆՆ ՈՒ ԳԱՐԵԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ»



Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ԷԿՄԻԱԴՅԻՆ Վ ՊՐՈՎԼՈՄ

Գոսիզդատ ССР Արմենիա
Էրևան—1981

ՀՀ Ազգային գրադարան



NL0163247

14262